Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 5-Ա, ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի ԹԻՎ ԹԻՎ 8-Ա, 9-Ա, ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի ԹԻՎ ԹԻՎ 10-Ա, 11-Ա ԵՎ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ԹԻՎ 14-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 5-Ա որոշման բովանդակության մեջ «համամասնությունները» բառից հետո անհրաժեշտ է գրառել «համաձայն հավելվածների» բառերը: Բացի այդ, համայնքի բյուջեի եռմասյա համամասնություններն անհրաժեշտ էր ներկայացնել որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածների տեսքով: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասի դրույթների՝ նորմատիվ իրավական ակտով հաստատվող կանոնները, կանոնադրությունները, կարգերը, ցանկերը, աղյուսակները և այլն ամրագրվում են (կամ ձևակերպվում են) նորմատիվ իրավական ակտի անբաժանելի մաս համարվող հավելվածների ձևով:

Թիվ 8-Ա որոշման 2-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներին, համաձայն որոնց՝ անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ: Բացի այդ, որոշմանը կից հիմնավորումը ներկայացնելու անհրաժեշտություն չկար:

Թիվ 9-Ա որոշման վերնագրում անհրաժեշտ է «համարակալման և» բառերը հանել:

Որոշման նախաբանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված 29-րդ կետին կատարված հղումը սխալ է գրառված: Այսինքն՝ անհրաժեշտ է հղում կատարել ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով ***սահմանված*** կարգի 29-րդ կետի ***3-րդ*** ենթակետի դրույթներին: Իսկ 48-րդ կետին կատարված հղումը ավելորդ է:

Թիվ 10-Ա որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներին:

Թիվ 11-Ա որոշման նախաբանում անհրաժեշտ էր հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, ՀՀ հողային օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին, ինչպես նաև նշված հարցի վերաբերյալ ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու համապատասխան որոշմանը:

Թիվ 14-Ա որոշման նախաբանում ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու որոշմանը կատարված հղումը թերի է գրառված: Անհրաժեշտ է «որոշման» բառից հետո լրացնել «1-ին կետով սահմանված» թիվը և բառերը:

Որոշման բովանդակության մեջ անհատ ձեռնարկատիրոջ իրավաբանական հասցեն կիսատ է գրառված, «արտադրանքի» բառը փոխարինել «արտադրատեսակների» բառով: Բացի այդ, որոշումը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներին:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
25.02.2022թ.